



# Legislation update

Summary of selected documents published for the period from 1 January 2016 to 31 March 2016

Tax

Issue 2, 2016

## A Bibliography of New Legislation, Instructions and Documents, with Commentary

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Անվանումը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
Ամսաթիվը. 12 հունվարի 2016թ.  
Համարը. ՀՕ-2-Ն  
Հրատարակում. ՊՏ No. 2, 13 հունվարի 2016թ.  
Ուժի մեջ է. 2016թ. մարտի 1-ից

#### Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ ավանդատուն հնարավորություն կունենա հատուցում ստանալու պահանջը ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև հնարավորություն կունենա հատուցումը ստանալ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ՝ իր կողմից նշված հաշվին փոխանցման միջոցով:

Միաժամանակ, օրենքում կարգավորվել են բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում յուրաքանչյուր բանկում առկա միևնույն ավանդատուին պատկանող ժամկետային ավանդների հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես՝ սահմանվել է, որ յուրաքանչյուր բանկում առկա միևնույն ավանդատուին պատկանող ժամկետային ավանդները երաշխավորվում են որպես առանձին բանկային ավանդներ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, իսկ ավանդատուին պատկանող ցպահանջ ավանդների դեպքում մեկ տարվա ընթացքում ավանդները երաշխավորվում են որպես առանձին բանկային ավանդներ, իսկ ժամկետը լրանալու պահից այդ ավանդները երաշխավորվում են որպես մեկ ավանդ:

### GENERAL LEGISLATION

1. Title On making amendments and additions to the RA Law “On Guaranteeing Reimbursement of Bank Deposits of the Individuals” RA Law

Document: RA Law  
Date: 12 January 2016  
Number: HO-2-N  
Publication: OJ No. 2, 13 January 2016  
Effective: From 1 March 2016

#### Abstract:

In accordance with this amendment to the law the depositor will have an opportunity to submit the claim for receipt of remuneration both in written and electronic forms, as well as to receive the remuneration in cash or via transfer to the bank account indicated by himself/herself.

At the same time, the relations concerning treatment of term deposits of the same depositor placed in each bank in case of accession of a bank or several banks to another bank have been regulated in the law. Particularly, it has been established that term deposits of the same depositor placed in each bank are guaranteed as separate bank deposits till the end of their contractual maturity and demand deposits held by the depositor are guaranteed during one year as separate bank deposits and as one deposit after the maturity date.

**2. Անվանումը** «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
 Ամսաթիվը. 12 հունվարի 2016թ.  
 Համարը. ՀՕ-3-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 2, 13 հունվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիրը.**

Օրենքի այս փոփոխության արդյունքում բարձրացվել է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով, ինչպես նաև արտարժույթով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները լուծարային միջոցների հաշվին մարելու սահմանաչափերը:

Մասնավորապես, ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները մարվում են մինչև 10 միլիոն դրամի չափով 2 միլիոն դրամի փոխարեն, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 5 միլիոն դրամին համարժեք չափով 1 միլիոնի դրամի փոխարեն:

**3. Անվանումը** «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
 Ամսաթիվը. 12 հունվարի 2016թ.  
 Համարը. ՀՕ-8-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 2, 13 հունվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

**Համառոտ նկարագիրը.**

Օրենքի այս փոփոխության արդյունքում արգելվել է այն տրանսպորտային միջոցների երթևեկությունը, որոնց առավելագույն ընդհանուր զանգվածը գերազանցում է 44 տոննան, իսկ տրանսպորտային միջոցի մեկ սնու վրա ընկնող բեռնվածքը՝ 11.5 տոննան: Միաժամանակ, սահմանվել է, որ եթե նշյալ ցուցանիշները գերազանցող տրանսպորտային միջոցը փոխադրում է չմասնատվող բեռներ, ապա ծանրաքաշ տրանսպորտային միջոցների երթևեկությունը պետք է իրականացվի փոխադրումների իրականացման հատուկ թույլտվության առկայությամբ:

Օրենսդրական այս փոփոխությունից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

**4. Անվանումը** «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
 Ամսաթիվը. 12 հունվարի 2016թ.  
 Համարը. ՀՕ-13-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 2, 13 հունվարի 2016թ.

**2. Title** On making an amendment to the RA Law “On Bankruptcy of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers and Insurance Companies”

Document: RA Law  
 Date: 12 January 2016  
 Number: HO-3-N  
 Publication: OJ No. 2, 13 January 2016  
 Effective: From the 10th day following the official publication

**Abstract:**

As a result of this amendment to the law limits of repayment of bank deposits and account balances of the citizens of the Republic of Armenia, foreign citizens, as well as persons without citizenship denominated both in AMD and foreign currency at the expense of liquidation funds have been increased.

Particularly, from liquidation funds are covered AMD bank deposits and account balances of up to AMD 10 million instead of previously defined AMD 2 million and foreign currency deposits (accounts) of up to foreign currency equivalent of AMD 5 million instead of previously defined AMD 1 million.

**3. Title** On making additions and an amendment to the RA Law “On Motor roads”

Document: RA Law  
 Date: 12 January 2016  
 Number: HO-8-N  
 Publication: OJ No. 2, 13 January 2016  
 Effective: From the 10th day following the official publication

**Abstract:**

As a result of this amendment to the law the traffic of vehicles the maximum total weight of which exceeds 44 tonnes and with load of 11.5 tonnes per leaf spring is prohibited. At the same time it has been established that in case a vehicle the characteristics of which exceed the above figures carries a non-demountable freight, the traffic of heavy vehicles shall be arranged in case a special transportation permission is available.

Appropriate changes resulting from this legislative amendment have been also made to the RA Law “On State Duty” and the RA Code on Administrative Offences.

**4. Title** On making additions to the RA Law “On Financial System Mediator”

Document: RA Law  
 Date: 12 January 2016  
 Number: HO-13-N  
 Publication: OJ No. 2, 13 January 2016

Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Effective: From the 10th day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավասու է քննել նաև վարկային բյուրոների դեմ ներկայացված պահանջների դեպքում՝ նաև ոչ գույքային բնույթի պահանջը:

In accordance with this amendment to the law the financial system mediator is also entitled to examine non-property claims filed against credit bureaus.

Միաժամանակ, սահմանվել է վարկային բյուրոյի կողմից ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին կատարվող տարեկան վճարի չափը՝ 140 000 ՀՀ դրամի չափով:

At the same time, the amount of annual fee paid by the credit bureau to the office of financial system mediator is set to be AMD 140,000.

Օրենսդրական այս փոփոխությունից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքում:

Appropriate changes resulting from this legislative amendment have been also made to the RA Law “On Circulation of Credit Information and Activities of Credit Bureaus”.

**5. Անվանումը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին**

**5. Title On making additions to the RA Law “On Credit Organizations”**

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
 Ամսաթիվը. 12 հունվարի 2016թ.  
 Համարը. ՀՕ-15-Ն  
 Հրապարակում. ՊՏ No. 2, 13 հունվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Document: RA Law  
 Date: 12 January 2016  
 Number: HO-15-N  
 Publication: OJ No. 2, 13 January 2016  
 Effective: From the 10th day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է, որ վարկային կազմակերպությունները պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ և սահմանվել են դրանցով սահմանվող կանոնները:

In accordance with this amendment to the law credit organizations shall have rules of business behavior and rules established thereby have been defined.

Միաժամանակ, սահմանվել է, որ նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ վարկային կազմակերպության կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում վարկային կազմակերպությունը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 ՀՀ դրամ:

At the same time it has been established that in case the fact of breach by a credit organization of the specified requirements of business behavior rules is confirmed by court, arbitration or financial system mediator, the credit organization is obliged to pay AMD 300,000 to a customer being individual.

*Այս դրույթը ուժի մեջ է մտնելու 2017թ. հունվարի 1-ից:*

*This provision will come into force from 1 January 2017.*

**6. Անվանումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին**

**6. Title On making an addition to the RA Law “On Banks and Banking”**

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
 Ամսաթիվը. 12 հունվարի 2016թ.  
 Համարը. ՀՕ-16-Ն  
 Հրապարակում. ՊՏ No. 2, 13 հունվարի 2016  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Document: RA Law  
 Date: 12 January 2016  
 Number: HO-16-N  
 Publication: OJ No. 2, 13 January 2016  
 Effective: From the 10th day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է, որ բանկերը պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ և սահմանվել են դրանցով սահմանվող կանոնները:

In accordance with this amendment to the law banks shall have rules of business behavior and rules established thereby have been defined.

Միաժամանակ, սահմանվել է, որ նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու

At the same time it has been established that in case the fact of breach by a bank of the specified requirements of business behavior rules is confirmed by court, arbitration or financial system mediator, the bank is obliged to pay AMD 300,000 to a customer being individual.

դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 ՀՀ դրամ:

*Այս դրույթը ուժի մեջ է մտնելու 2017թ. հունվարի 1-ից:*

*This provision will come into force from 1 January 2017.*

**7. Անվանումը** **ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 23-ի N 505-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

**7. Title** **On making amendments and additions to the RA government decree No. 505-N dated 23 April 2003**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 29 հունվարի 2016թ.  
 Համարը. 62-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 10, 10 փետրվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Document: RA Government Decree  
 Date: 29 January 2016  
 Number: 62-N  
 Publication: OJ No. 10, 10 February 2016  
 Effective: From the 10th day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 23.04.2003. «ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 19-ի No.2081-Ն («Քիմբերլեյ գործընթացին ՀՀ կառավարության միանալու մասին») որոշման կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» No.505-Ն որոշման մեջ:

By this RA Government Decree amendments and additions have been made to the RA Government Decree No. 505-N dated 23 April 2003 on “Measures ensuring enforcement of the RA Government Decree No: 2081-N dated 19 December 2002 (*on joining of RA Government to the Kimberley process*)”.

Կատարված փոփոխությունների արդյունքում Քիմբերլեյ գործընթացի հավաստագիր (տրամադրվում է ավանստների ՀՀ ներմուծման և ՀՀ արտահանման դեպքում) ստանալու համար ներդրվել է նաև էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման կարգը, համաձայն որի հավաստագիր ստանալու համար հայտարարատուն կարող է դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով:

As a result of the amendments made, for the receipt of Kimberley process certificate (issued for the diamonds import to the RA and export from the RA) a procedure on submission of documents in electronic form has been introduced, according to which an applicant can submit also an electronic application in order to receive the certificate.

*Հիշեցնենք, որ նշյալ գործընթացի հավաստագիր ստանալու համար նախկինում հայտարարատուն սահմանված կարգով ներկայացնում էր անհրաժեշտ փաստաթղթերը միայն թղթային եղանակով:*

*Please be reminded that previously for obtaining the above mentioned process certificate an applicant should submit the required documents only in a paper form in accordance with the stipulated procedure.*

## ՀԱՐԿԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

## TAXES AND OTHER MANDATORY PAYMENTS

**1. Անվանումը** Ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային մարմնի կողմից ապրանքների դասակարգման վերաբերյալ անհամաձայնության դեպքում հայտարարատուի կողմից մաքսային մարմին ներկայացվող՝ ապրանքների դասակարգման առնչվող լրացուցիչ տեղեկությունների ցանկը սահմանելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 14 հունվարի 2016թ.  
 Համարը. 13-Ն  
 Հրապարակում. ՊՏ No. 4, 20 հունվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ սահմանվել է հայտարարատուի կողմից մաքսային մարմին ներկայացվող այն լրացուցիչ տեղեկությունների ցանկը, որոնք անհրաժեշտ են ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային մարմնի կողմից ապրանքների դասակարգման վերաբերյալ անհամաձայնության դեպքում:

**2. Անվանումը** ՀՀ սահմանով արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման բացատրական նշումները սահմանելու և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի No.2170-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 20 հունվարի 2016թ.  
 Համարը. 33-Ն  
 Հրապարակում. ՊՏ No. 8, 3 փետրվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ սահմանվել է արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման բացատրական նշումները: Մասնավորապես, սահմանվել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 78-84-րդ հոդվածների և «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի դրույթների համաձայն արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման եղանակների հաջորդական կիրառումը:

Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի «Մաքսային արժեքի որոշման բացատրական նշումները հաստատելու մասին» No.2170-Ն որոշումը:

**3. Անվանումը** Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման կարգը սահմանելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 20 հունվարի 2016թ.

**1. Title** On defining the list of additional information related to the classification of goods submitted by the declarant to the customs authority in case of disagreement with the classification of goods by the customs authority during declaration of goods

Document: RA Government Decree  
 Date: 14 January 2016  
 Number: 13-N  
 Publication: OJ No. 4, 20 January 2016  
 Effective: From the 10th day following the official publication

### Abstract:

By this RA Government Decree the list of additional information necessary to be submitted by the declarant to the customs authority in case of disagreement with the classification of goods by the customs authority during declaration of goods has been defined.

**2. Title** On defining explanatory notes for determination of customs value of goods exported by the RA border and repealing the RA Government Decree No. 2170-N dated 5 December 2002

Document: RA Government Decree  
 Date: 20 January 2016  
 Number: 33-N  
 Publication: OJ No. 8, 3 February 2016  
 Effective: From the day following the official publication

### Abstract:

By this RA Government Decree the explanatory notes for determination of customs value of exported goods has been defined. Particularly, the sequential application of methods for determination of customs value of goods exported in accordance with the provisions of articles 78-84 of the RA Law "On Customs Regulation" and Agreement "On Implementation of Article VII of General Agreement on Tariffs and Trade" has been established.

At the same time the RA Government Decree No. 2170-N on approval of explanatory notes for determination of customs value dated 5 December 2002 has been repealed.

**3. Title** On defining a procedure on replacement of results of goods processing outside the customs territory with equivalent foreign goods

Document: RA Government Decree  
 Date: 20 January 2016

Համարը. 41-Ն  
 Հրապարակում. ՊՏ No. 8, 3 փետրվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Number: 41-N  
 Publication: OJ No. 8, 3 February 2016  
 Effective: From the 10th day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

ՀՀ կառավարության այս որոշմամբ կարգավորվել է «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել է, որ վերամշակման արդյունքները համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինելու համար անհրաժեշտ է ստանալ մաքսային մարմնի թույլտվությունը, իսկ մաքսային մարմինը թույլտվությունը տրամադրում է եթե

- 1) վերամշակման արդյունքների և համարժեք օտարերկրյա ապրանքների նկարագիրը, որակն ու տեխնիկական բնութագիրը համընկնում են,
- 2) վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման հնարավորությունը նախատեսվում է Միության ապրանքների վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագրով,
- 3) վերամշակման արդյունքները փոխարինվում են տրամադրված վերամշակման թույլտվության համաձայն՝ վերամշակման արդյունքի սկզբնական մատակարարի կամ նրա հանձնարարությամբ վերամշակման արդյունքի անմիջական արտադրողի կողմից,
- 4) վերամշակման նպատակը երաշխիքային ժամկետում գործող անհատույց (երաշխիքային) վերանորոգումն է, եթե վերամշակման արդյունքի մատակարարը հաստատում է անսարք ապրանքի փոխարինումը համարժեք օտարերկրյա ապրանքով և տվյալ փոխարինումը նախատեսված է կողմերի միջև կնքված մատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրով կամ մատակարարի կողմից տրամադրված երաշխիքով կամ կիրառելի օտարերկրյա իրավունքի համակցությամբ:

**Abstract:**

By this RA Government Decree relations concerning replacement of results of goods processing with equivalent foreign goods when implementing customs procedure on “processing outside customs territory” have been regulated.

Particularly, it has been established that permission of the customs authority is required for replacement of results of goods processing with equivalent foreign goods and the customs authority provides the permission in case:

- 1) description, quality and technical characteristics of processing results are identical with those of equivalent foreign goods;
- 2) the possibility of replacement of results of goods processing with equivalent foreign goods is provided for by the agreement for provision of goods repair services of the Union;
- 3) processing results are replaced in accordance with the granted processing permission by the initial supplier of the processing result or by the immediate manufacturer of the processing result on the instructions of the initial supplier;
- 4) the purpose of processing is free (warranty) repair within warranty period in case the supplier of the processing result confirms the replacement of out of order goods with the equivalent foreign goods and this replacement is stipulated by the supply (sale and purchase) agreement signed between the parties or by the warranty provided by the supplier or by a combination of applicable foreign law.

**4. Անվանումը** Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող և հետագայում Եվրասիական տնտեսական միության անդամ այլ պետություններ արտահանվող Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված ապրանքների համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի ներկայացման մասին

**4. Title** On submission of documents on compliance assessment of goods provided for by technical regulations of the Eurasian Economic Union that are imported to the RA territory from non-member states of the Eurasian Economic Union and are subsequently exported to other member states of the Eurasian Economic Union

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 18 փետրվարի 2016թ.  
 Համարը. 134-Ն  
 Հրապարակում. ՊՏ No. 15, 24 փետրվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2016թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա

Document: RA Government Decree  
 Date: 18 February 2016  
 Number: 134-N  
 Publication: OJ No. 15, 24 February 2016  
 Effective: From the day following the official publication and is effective for the relations occurred from 1 January 2016.

**Համառոտ նկարագիրը.**

ՀՀ Կառավարության այս որոշմամբ սահմանվել է, որ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող և հետագայում ԵԱՏՄ անդամ այլ պետություններ արտահանվող ապրանքների համար ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմիններին կարող են ներկայացվել նշված ապրանքների՝ ԵԱՏՄ անդամ այլ պետություններ արտահանման ժամանակ՝ նախքան «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումը:

**5. Անվանումը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ օրենք  
 Ամսաթիվը. 17 մարտի 2016թ.  
 Համարը. ՀՕ-31-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 25, 30 մարտի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից

**Համառոտ նկարագիրը.**

Օրենքի այս փոփոխության արդյունքում սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք իրենց կողմից ՀՀ տարածք ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծված ավտոմեքենաների մասով ԱԱՀ պարտավորություն չեն կրում:

Այս փոփոխության հետ կապված լրացում է կատարվել նաև ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի No. 865-Ն որոշման մեջ: Մասնավորապես, սահմանվել է որ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծված ավտոմեքենաների մասով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող 8703 կոդին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծման դեպքում ապրանքների ակնհայտ առևտրային քանակություն է համարվում 1-ից ավելի քանակը: Արդյունքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք ԵԱՏՄ անդամ պետություններից առանց ԱԱՀ պարտավորություն կրելու կարող են ներկրել միայն 1 թեթև մարդատար ավտոմեքենա:

**6. Անվանումը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի No.1364-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 29 դեկտեմբերի 2015թ.  
 Համարը. 1571-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 14, 24 փետրվարի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից

**Համառոտ նկարագիրը.**

ՀՀ կառավարության այս որոշմամբ մի շարք լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի

**Abstract:**

In accordance with this RA Government Decree documents on assessment of compliance with technical regulations of the EAEU of goods that are imported to the RA territory from non-member states of the EAEU and are subsequently exported to other member states of the EAEU can be submitted to the customs authorities when exporting these goods to other member states of the EAEU, before recording the goods by "Customs transit" customs procedure.

**5. Title On making an addendum and amendment to the RA Law "On Value Added Tax"**

Document: RA Law  
 Date: 17 March 2016  
 Number: HO-31-N  
 Publication: OJ No. 25, 30 March 2016  
 Effective: From the day following the official publication

**Abstract:**

As a result of this amendment to the law it was established that individuals not being sole entrepreneurs or notaries do not bear VAT liability with respect to cars imported by them to the RA territory from member states of the EAEU.

With respect to this amendment a supplement has been to the RA Government Decree No: 865-N dated 30 July 2015. Particularly, it has been established that with regard to the cars imported from member states of the EAEU for individuals not being sole entrepreneurs or notaries the obvious commercial quantity is considered to be quantity of more than 1 item, when importing vehicles under code 8703 to the RA. As a result, individuals not being sole entrepreneurs or notaries can import from the member states of the EAEU only 1 passenger car without bearing VAT liability.

**6. Title On making additions and amendments to the RA Government Decree No: 1364-N dated 5 December 2013**

Document: RA Government Decree  
 Date: 29 December 2015  
 Number: 1571-N  
 Publication: OJ No. 14, 24 February 2016  
 Effective: From the day following the official publication

**Abstract:**

By this RA Government Decree a number of supplements and amendments have been made to the RA government decree No: 1364-N of 5 December 2013 "On approval of a procedure on electronic issuance of settlement documents accompanying delivered or transported products and goods".

Էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» No.1364-Ն որոշման մեջ:

Փոփոխությունների արդյունքում սահմանվել է մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել է ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հաշիվ-ապրանքագրի ձևը, որը հնարավորություն կտա հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս գրել էլեկտրոնային եղանակով: Միաժամանակ, սահմանվել է, որ մինչև ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) հաշիվ-ապրանքագրերի էլեկտրոնային ձևերի ներդրումը՝ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) գործարքների համար որպես հաշվարկային փաստաթուղթ անհրաժեշտ է կիրառել արտադրանքների, ապրանքների հաշիվ-ապրանքագրերի գործող էլեկտրոնային ձևերը:

As a result of the amendments relations concerning electronic issuance of settlement documents for the services provided (works performed) have been established. Particularly, a form of the invoice for the services provided and works performed has been set, which will allow to issue settlement documents electronically (except for cash register receipts and settlement documents issued when exporting goods). At the same time it has been defined that before introduction of electronic forms of the invoices for the services provided (works performed), the effective electronic forms of invoices of the products and goods shall be used as settlement documents for the services provided (works performed).

**7. Անվանումը** 2015թ-ին և հետագա տարիներին ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանվելու դեպքերում կիրառությունից հանված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորման կարգը և ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման դիմումի ձևը հաստատելու մասին

**7. Title** On approval of a procedure on stamping of the remaining stock of the goods stamped by the excise stamps out of use in cases when the excise stamps were got out of use in 2015 and subsequent years and the application form for the purchase of excise stamps

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 18 փետրվարի 2016թ.  
 Համարը. 236-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 22, 23 մարտի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից

Document: RA Government Decree  
 Date: 18 February 2016  
 Number: 236-N  
 Publication: OJ No. 22, 23 March 2016  
 Effective: From the day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

ՀՀ կառավարության այս որոշմամբ սահմանվել է 2015թ-ին և հետագա տարիներին անմիջական արտադրող, անմիջական ներմուծող, ինչպես նաև անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մոտ առկա կիրառությունից հանված դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների մնացորդները դրոշմավորելու կարգը:

**Abstract:**

This RA government decree establishes a procedure on stamping the remaining stock of the goods stamped by the excise stamps got out of use in 2015 and subsequent years held by the immediate manufacturer, immediate importer, as well as by the organizations and sole entrepreneurs not being immediate manufacturers or immediate importers.

**8. Անվանումը** ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի No.865-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

**8. Title** On making an amendment to the RA government decree No: 865-N dated 30 July 2015

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 18 փետրվարի 2016թ.  
 Համարը. 231-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 22, 23 մարտի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից

Document: RA Government Decree  
 Date: 18 February 2016  
 Number: 231-N  
 Publication: OJ No. 22, 23 March 2016  
 Effective: From the day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 30.07.2015թ. «ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզի-

**Abstract:**

In accordance with this RA Government Decree an amendment has been made to the RA Government Decree No: 865-N of 30 July 2015 “On defining a form of notification for payment of indirect taxes and submission of import tax declaration and



կական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման ձևը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. մարտի 20-ի No.502-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» No.865-Ն որոշման մեջ:

information about obvious commercial quantity of goods imported to the RA by individuals not being sole entrepreneurs in accordance with the procedure stipulated by the law and on repealing the RA Government Decree No. 502-N of 20 March 2013”.

Մասնավորապես, սահմանվել է, որ որոշման դրույթները չեն տարածվում.

Particularly, it has been defined that the provisions of the decree are not applicable for:

- ՀՀ տարածք ժամանակավոր ներմուծվող ապրանքների վրա,
- ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների վրա: Այս ներմուծումների դեպքում մաքսային վճարները գանձվում են «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույքաչափերով
- ԵԱՏՄ անդամ հանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների վրա, եթե այդ ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը 200 հազ. դրամը:
- goods temporarily imported to the RA territory;
- goods imported by individuals to the RA territory from non-member states of the EAEU via international postal and courier services. In case of such import customs fees are charged in accordance with clause 4 of article 249 of the RA Law “On Customs Regulation”;
- goods imported by individuals to the RA territory from member states of the EAEU via international postal and courier services in case total weight of these goods does not exceed 30 kilogram and the customs value does not exceed AMD 200,000.

**9. Անվանումը** **ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի No.1330-Ն և 2013թ. օգոստոսի 1-ի No.891-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին**

**9. Title** **On making supplements and amendments to the RA Government Decree No: 1330-N dated 30 October 2008 and decree No: 891-N dated 1 August 2013**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 20 հունվարի 2016թ.  
 Համարը. 249-Ն  
 Հրատարակում. ՊՏ No. 22, 23 մարտի 2016թ.  
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2016թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա

Document: RA Government Decree  
 Date: 20 January 2016  
 Number: 249-N  
 Publication: OJ No. 22, 23 March 2016  
 Effective: From the day following the official publication and is effective for the relations occurred from 1 January 2016.

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

Այս որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 30.10.2008թ. «Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման կարգը հաստատելու մասին» No.1330-Ն որոշման մեջ: Մասնավորապես, սահմանվել է, որ հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով անցկացվող վիճակահանությունները 2016թ. փետրվար և հաջորդող ամիսներին չեն անցկացվի, միաժամանակ, սահմանվել է, որ որոշումը կգործի մինչև 2016թ. հունվար ամսվա վիճակահանության արդյունքում շահող կտրոններ տիրապետողներին 2016թ. փետրվար ամսվա ընթացքում պարգևավճարների տրամադրումը:

In accordance with this decree supplements and amendments have been made to the RA Government Decree No: 1330-N of 30 October 2008 on approval of a procedure on arrangement of lotteries and payment of bonuses for assistance to tax administration. Particularly, it has been established that lotteries arranged to support tax administration will not be held in February 2016 and subsequent months, at the same time the same decree sets that the decree will be in force till payment in February 2016 of bonuses to the holders of tickets won during the lottery of January 2016.

**10. Անվանումը** **ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 1-ի No.846-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին**

**10. Title** **On making an amendment and additions to the RA government decree No: 846-N dated 1 August 2013**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
 Ամսաթիվը. 18 փետրվարի 2016թ.  
 Համարը. 141-Ն

Document: RA Government Decree  
 Date: 18 February 2016  
 Number: 141-N

Հրապարակում. ՊՏ No. 22, 23 մարտի 2016թ.  
Ուժի մեջ է. 2016թ. մայիսի 1-ից

Publication: OJ No. 22, 23 March 2016  
Effective: From 1 May 2016

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

ՀՀ կառավարության այս որոշմամբ նախորդ տարվա արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար մինչև 2017թ. հունվարի 1-ը հետաձգվել է ՀՀ կառավարության «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի No. 1325-Ն ու 2005թ. հունիսի 1-ի N 946-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշմամբ սահմանված ՀԴՄ կտրոններին ներկայացվող պահանջը: Մասնավորապես, նշված հարկ վճարողների համար հետաձգվել է ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը) ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) առնվազն 2-րդ աստիճանին համապատասխան լրացման պահանջը:

In accordance with this RA Government Decree for tax payers with sales revenue of AMD 10.0 million to AMD 58.35 million based on previous year's results the fulfillment of the requirement established for cash register receipts according to the RA Government Decree "On approval of the requirements set for cash registers and their application procedure and on repealing the RA Government Decree No:1325-N of 26 August 2004 and decree No: 946-N of 1 June 2005" has been postponed till 1 January 2017.

Particularly, the fulfillment of the requirement to complete names (types) of goods (services) in cash register receipts in line with at least 2nd level of classifier of classification of products by activity (CPA) has been postponed for the above stated tax payers.

**11. Անվանումը ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 14-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

**11. Title On making amendments and addition to the RA Government Decree No: 1262-N dated 14 November 2013**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում  
Ամսաթիվը. 10 մարտի 2016թ.  
Համարը. 220-Ն  
Հրապարակում. ՊՏ No. 20, 16 մարտի 2016թ.  
Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից

Document: RA Government Decree  
Date: 10 March 2016  
Number: 220-N  
Publication: OJ No. 20, 16 March 2016  
Effective: From the day following the official publication

**Համառոտ նկարագիրը.**

**Abstract:**

Այս որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 14.11.2013թ. «Արդյունաբերական ընկերությունների կողմից ձեռք բերված ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարի վերադարձման կարգը հաստատելու մասին» No.1262-Ն որոշման մեջ: Մասնավորապես, փոփոխվել է «Նախկինում վճարված ակցիզային հարկի գումարները ՀՀ պետական բյուջեից վերադարձնելու մասին» եզրակացության ձևը՝ նախատեսելով գումարների վերադարձ հարկ վճարողի նշված բանկային հաշվին: Համապատասխան փոփոխություն է կատարվել նաև հարկ վճարողի կողմից ներկայացվող դիմումի ձևում:

In accordance with this decree amendments and supplements have been made to the RA Government Decree No: 1262-N on approval of a procedure on refund of the excise tax paid for the goods under codes ATG AA 2710 19 710 - 2710 19 980 obtained by the industrial companies (except for the motor oil classified under code ATG AA 2710 19 820).

Particularly, the form of the conclusion on refund from the RA state budget of the previously paid excise tax amounts has been changed, providing for the refund of the amounts to the bank account indicated by the taxpayer. Relevant amendment has been also made to the application form submitted by the tax payer.

**Contact us**

**KPMG Armenia cjsc**

8th floor, Erebuni Plaza Business Center,

26/1 Vazgen Sargsyan Street,

Yerevan, 0010, Armenia

Tel/Fax: +374(10) 566 762

E-mail: [general@kpmg.co.am](mailto:general@kpmg.co.am)

**«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ**

Վազգեն Սարգսյանի փ. 26/1,

«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Երևան, 0010, Հայաստան

Հեռ/ֆաքս: +374(10) 566 762

Էլ-փոստ : [general@kpmg.co.am](mailto:general@kpmg.co.am)

The information contained herein is of a general nature and is not intended to address the circumstances of any particular individual or entity. Although we endeavour to provide accurate and timely information, there can be no guarantee that such information is accurate as of the date it is received or that it will continue to be accurate in the future. No one should act on such information without appropriate professional advice after a thorough examination of the particular situation.

© 2016 KPMG Armenia cjsc, a company incorporated under the Laws of the Republic of Armenia, a member firm of the KPMG network of independent member firms affiliated with KPMG International Cooperative ("KPMG International"), a Swiss entity. All rights reserved.

The KPMG name and logo are registered trademarks or trademarks of KPMG International.

Սույնով ներկայացված տեղեկատվությունը ընդհանուր բնույթ է կրում և նպատակատիրոջը չէ որևէ հատուկ անձի կամ ընկերությունում առկա հանգամանքներին: Մենք փորձում ենք ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել ճիշտ ժամանակին, այնուամենայնիվ, որևէ երաշխիք չի կարող լինել այն մասին, որ այդ տեղեկատվությունը ճշգրիտ կլինի դրա ստացման ամսաթվի դրությամբ, կամ որ այն կշարունակի ճշգրիտ լինել ապագայում: Ոչ ոք չպետք է այդ տեղեկատվության հիման վրա որևէ գործողություն կատարի՝ առանց համապատասխան մասնագիտական խորհրդատվություն ստանալու տվյալ մասնավոր իրադրության խորը ուսումնասիրությունից հետո:

© 2016 ՏՔԵՅՓԻԷՄՋԻ Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, Չվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող ՏՔԵՅՓԻԷՄՋԻ՝ անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG անվանումը և KPMG լոգոտիպը KPMG International կազմակերպության գրանցված ապրանքային նշաններն են :